ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 544-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 2023.04.03-2023.04.16 Պաշտոնական հրապարակման օրը 14.04.2023	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	13.04.2023
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	14.04.2023
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01.09.2023	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Ծանուցում

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023/2024 ուսումնական տարվանից և տարածվում նաև մինչև 2023/2024 ուսումնական տարին սույն որոշմամբ հաստատված հավելվածներում նոր ընդգրկված մասնագիտություններով սովորողների վրա՝ 2023/2024 և հետագա ուսումնական տարիների ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկի վերադարձի իրավունքով:

Կապեր այլ փաստաթղթերի հետ

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1035-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ապրիլի 2023 թվականի N 544-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1035-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի «Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայի, ասպիրանտուրայի և օրդինատուրայի այն մասնագիտությունները հաստատելու մասին, որոնցից որևէ մեկով առկա ուսուցմամբ սովորողի (ուսանողի) աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկն ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով վերադարձվում է» N 1035-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) NN 1 և 3 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

2) N 2 հավելվածի՝

ա. «Ե.00.00 Տեխնիկական գիտություններ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

Ե.05.00	**Տրանսպորտային, լեռնային և շինարարական մեքենաշինություն**	
Ե.05.01	Ավտոմեքենաներ և տրակտորներ	Տեխնիկական
Ե.18.00	**Պարենամթերքի տեխնոլոգիա**	
Ե.18.01	Բուսական և կենդանական ծագման մթերքների վերամշակման և արտադրության տեխնոլոգիա	Գյուղատնտեսական, տեխնիկական

»,

բ. «Զ.01.00 Ագրոնոմիա» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«

Զ.01.02	Բուսաբուծություն, խաղողագործություն, պտղաբուծություն և բույսերի պաշտպանություն	Գյուղատնտեսական, կենսաբանական

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023/2024 ուսումնական տարվանից և տարածվում նաև մինչև 2023/2024 ուսումնական տարին սույն որոշմամբ հաստատված հավելվածներում նոր ընդգրկված մասնագիտություններով սովորողների վրա՝ 2023/2024 և հետագա ուսումնական տարիների ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկի վերադարձի իրավունքով:

3. Մինչև 2023/2024 ուսումնական տարին «091601.00.7 Ֆարմացիա» մասնագիտությամբ մագիստրատուրա կամ «Ակնաբանություն», «Լաբորատոր ախտորոշում», «Ճառագայթային ախտորոշում», «Մանկաբարձություն և գինեկոլոգիա», «Սրտաբանություն (կարդիոլոգիա)» մասնագիտություններով կլինիկական օրդինատուրա ընդունված սովորողները մինչև ուսումնառության ավարտը շարունակում են օգտվել ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված եկամտային հարկի վերադարձի իրավունքից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

Երևան

14.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 13-ի N 544-Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 18-ի N 1035-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՑԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՍՈՎՈՐՈՂԻ (ՈՒՍԱՆՈՂԻ) ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ Է

Դասիչը (ծածկագիրը)	Մասնագիտությունը	Որակավորումը
01 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ		
011 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ		

011101.00.7	Կրթական գիտություններ	Կրթության մագիստրոս
011302.00.7	Հատուկ մանկավարժություն	Մանկավարժության մագիստրոս
02 ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐՎԵՍՏ		
021 ԱՐՎԵՍՏ		
021201.00.7	Դիզայն	Արվեստի մագիստրոս
021801.00.7	Արվեստի տեսություն և պատմություն	Արվեստի տեսության և պատմության մագիստրոս
03 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
031 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՔԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
031401.00.7	Սոցիոլոգիա	Սոցիոլոգիայի մագիստրոս
031501.00.7	Մշակութաբանություն	Մշակութաբանության մագիստրոս
05 ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ		
051 ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
051101.00.7	Կենսաբանություն	Կենսաբանության մագիստրոս
051201.00.7	Կենսաքիմիա	Կենսաբանության մագիստրոս
051202.00.7	Կենսաֆիզիկա	Կենսաբանության մագիստրոս
052 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ		
052101.00.7	Շրջակա միջավայրի գիտություններ	Շրջակա միջավայրի մագիստրոս
052201.00.7	Բնապահպանություն և բնօգտագործում	Շրջակա միջավայրի մագիստրոս
053 ՔԻՄԻԱ		
053101.00.7	Քիմիա	Քիմիայի մագիստրոս
054 ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ		
054101.00.7	Երկրաբանություն	Երկրաբանության մագիստրոս
054201.00.7	Աշխարհագրություն	Աշխարհագրության մագիստրոս
054301.00.7	Գեոմատիկա	Երկրի մասին գիտությունների մագիստրոս
055 ՖԻԶԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
055101.00.7	Ֆիզիկա	Ֆիզիկայի մագիստրոս
055102.00.7	Ռադիոֆիզիկա	Ֆիզիկայի մագիստրոս
056 ՄԱԹԵՄԱՏԻԿԱ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ		
056101.00.7	Մաթեմատիկա	Մաթեմատիկայի մագիստրոս
056201.00.7	Վիճակագրություն	Վիճակագրության մագիստրոս
056801.00.7	Մեխանիկա	Մեխանիկայի մագիստրոս
056802.00.7	Ֆինանսական մաթեմատիկա	Ֆինանսական մաթեմատիկայի մագիստրոս
06 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ)		
061 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ (ՏՀՏ)		
061101.00.7	Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Ինֆորմատիկայի մագիստրոս

061102.00.7	Ծրագրային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի մագիստրոս
061103.00.7	Համակարգչային ճարտարագիտություն	Ինֆորմատիկայի մագիստրոս
061104.00.7	Տեղեկատվական համակարգեր	Ինֆորմատիկայի մագիստրոս
061105.00.7	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Ինֆորմատիկայի մագիստրոս
061901.00.7	Տեղեկատվական անվտանգություն	Տեղեկատվական անվտանգության մագիստրոս
07 ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		
071 ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		
071201.00.7	Շրջակա միջավայրի պահպանություն	Ճարտարագիտության մագիստրոս
071301.00.7	Էներգետիկա	Ճարտարագիտության մագիստրոս
071501.00.7	Մետալուրգիա	Ճարտարագիտության մագիստրոս
071602.00.7	Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Ճարտարագիտության մագիստրոս
071801.00.7	Նյութագիտություն և նոր նյութերի տեխնոլոգիա	Ճարտարագիտության մագիստրոս
071804.00.7	Ագրարային ճարտարագիտություն	Ճարտարագիտության մագիստրոս
072 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ		
072101.00.7	Պարենամթերքի տեխնոլոգիա	Տեխնոլոգիայի մագիստրոս
072301.00.7	Տեքստիլ և թեթև արդյունաբերության նյութերի և արտադրանքների տեխնոլոգիա	Տեխնոլոգիայի մագիստրոս
073 ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ		
073101.00.7	Ճարտարապետություն	Ճարտարապետության մագիստրոս
073102.00.7	Քաղաքային տնտեսություն	Ճարտարագիտության մագիստրոս
073201.00.7	Շինարարական ճարտարագիտություն	Ճարտարագիտության մագիստրոս
08 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ		
081 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
081101.00.7	Ագրոնոմիա	Գյուղատնտեսության մագիստրոս
081102.00.7	Անասնաբուծություն	Գյուղատնտեսության մագիստրոս
082 ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ		
082101.00.7	Անտառային տնտեսություն	Անտառային տնտեսության մագիստրոս
083 Ձկնային տնտեսություն		
083101.00.7	Ձկնային տնտեսություն	Ձկնային տնտեսության մագիստրոս
084 Անասնաբուժություն		
084101.00.7	Անասնաբուժություն	Անասնաբուժության մագիստրոս
09 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		

092 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
092301.00.7	Սոցիալական աշխատանք	Սոցիալական աշխատանքի մագիստրոս
10 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՍԵՐՎԻՍ)		
101 ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
101501.00.7	Զբոսաշրջություն	Զբոսաշրջության մագիստրոս
103 Անվտանգության ծառայություն		
103201.00.7	Անվտանգությունն արտակարգ իրավիճակներում	Անվտանգության ծառայության մագիստրոս

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2020 թվականի
հունիսի 18-ի N 1035-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՑԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿՈՎ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՍՈՎՈՐՈՂԻ (ՈՒՍԱՆՈՂԻ) ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿՆ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ Է

Մասնագիտությունը	Որակավորումը
Անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա (Անեսթեզիոլոգիա-ռեանիմատոլոգիա)	Բժիշկ-մասնագետ
Ընդհանուր վիրաբուժություն	Բժիշկ-մասնագետ
Ընտանեկան բժշկություն	Բժիշկ-մասնագետ
Ինֆեկցիոն հիվանդություններ	Բժիշկ-մասնագետ
Համաճարակաբանություն	Բժիշկ-մասնագետ
Հոգեբուժություն	Բժիշկ-մասնագետ
Մանկաբուժություն	Բժիշկ-մասնագետ
Մանկական անեսթեզիոլոգիա և ինտենսիվ թերապիա (Մանկական անեսթեզիոլոգիա-ռեանիմատոլոգիա)	Բժիշկ-մասնագետ
Մանկական վիրաբուժություն (Մանկական ընդհանուր վիրաբուժություն)	Բժիշկ-մասնագետ
Մանկական հոգեբուժություն	Բժիշկ-մասնագետ
Նեոնատոլոգիա	Բժիշկ-մասնագետ
Ներքին հիվանդություններ (Թերապիա, Ներքին բժշկություն)	Բժիշկ-մասնագետ
Նյարդաբանություն	Բժիշկ-մասնագետ
Շտապ և անհետաձգելի բժշկություն (Շտապ բուժօգնություն)	Բժիշկ-մասնագետ
Մանկական նյարդաբանություն	Բժիշկ-մասնագետ

»:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար

Ա. Հարությունյան

14.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Պաշտոնական հրապարակման օրը՝ 14 ապրիլի 2023 թվական: